ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«22» մայիսի 2019 թվականի N:223-ա ք.Գյումրի

ՄՐՑՈՒԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգի» 34-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանին հատկացված միջոցների հաշվին միջոցառումների կազմակերպման համար սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման նպատակով կայացած մրցույթի արդյունքում հաղթող ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության գիտության նախարարության «Երևանի «Մխիթար Սեբաստացի կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:
2. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանին հատկացված միջոցների հաշվին իրականացվելիք Կոմիտասի 150-ամյակին նվիրված «Հոգևոր երգերի մարզային 6-րդ փառատոն» մշակութային միջոցառման կազմակերպումը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության գիտության նախարարության «Երևանի «Մխիթար Սեբաստացի կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1

ք. Գյումրի «29» «Մայիս» 2019 թ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանը, ի դեմս մարզպետ Տ.Պետրոսյանի (այսուհետ՝ Պատվիրատու), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ը, (այսուհետ՝ Կատարող) ի դեմս տնօրեն Ա.Բլեյանի, որը գործում է Կատարողի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

Պայմանագրի առարկան

1. Պայմանագրով սահմանվում է «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 08 բաժնի 02 խմբի 05 դասի 1196 մարզերի մշակութային զարգացման 11001 «Մշակութային միջոցառումների իրականացում ՀՀ մարզերում» պետական ծրագրով ընթացիկ դրամաշնորհների տրամադրման կարգը, որի շրջանակներում Կատարողը մատուցում է հետևյալ ծառայությունները՝ **2019 թվականի մայիսի 30-ին Հառիճի վանական համալիրի տարածքում կազմակերպել և անցկացնել Կոմիտասի 150-ամյակին նվիրված «Հոգևոր երգերի մարզային փառատոն»** մշակութային միջոցառումը (այսուհետ՝ Պատվեր)՝ Պայմանագրով սահմանված կարգով, իսկ Պատվիրատուն պարտավորվում է բյուջեից հատկացված գումարի շրջանակներում Կատարողին տրամադրել **600 500 (վեց հարյուր հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,** ներառյալ ԱԱՀ-ն:

2. Ծառայության ընդհանուր նկարագրությունը և արժեքը ներկայացված են Պայմանագրի **Հավելված 1-ում և Հավելված 2-ում:**

Կողմերի իրավունքները և պարտականությունները

3. Պատվիրատուն իրավունք ունի.

1) Ցանկացած ժամանակ ստուգելու Կատարողի կողմից մատուցվող ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

2) Պահանջել Կատարողից Պայմանագրով սահմանված ժամկետում ներկայացնել հաշվետվություն:

4. Պատվիրատուն պարտավոր է.

1) Պայմանագրի շրջանակներում աջակցել Կատարողին:

5. Կատարողն իրավունք ունի.

1) Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում ստանալու ՀՀ պետական բյուջեից հատկացվող գումարը:

6. Կատարողը պարտավոր է.

1) Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով:

2) Ծառայությունը մատուցել Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

3) Կատարել Պատվիրատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները:

4) Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծառայության իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պատվիրատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Գինը, վճարման կարգը և ժամկետները

7. Պետական Պատվերի գինը կազմում է **600 500 (վեց հարյուր հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,** ներառյալ ԱԱՀ-ն:

8. Կատարողը Պատվերի ավարտից հետո՝ մինչև **2019 թվականի հունիսի 6-ը** պարտավոր է Պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն՝ իր կողմից իրականացված ծախսերի վերաբերյալ:

9. Պատվիրատուն հանձնման–ընդունման ակտը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը կամ ծառայությունները չընդունելու պատճառաբանված մերժումը: Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման ակտը ստորագրելու պահից:

10. Պատվիրատուն Պայմանագրի 7-րդ կետում նշված գումարը վճարում է Պատվերի իրականացումից հետո՝ մինչև պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը:

11. Պատվերի գնում ներառված ավելացված արժեքի հարկը Կատարողին վճարվում է հանձնման-ընդունման ակտի հիման վրա:

Կողմերի պատասխանատվությունը

12. Պայմանագրով հատկացված գումարի շրջանակներում Կատարողի կողմից աշխատանքների և ծառայությունների գնումները պետք է իրականացվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

13. Պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պայմանագրի գործողության ժամկետը

14. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև **2019 թվականի հունիսի 27-ը:**

Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

15. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

Եզրափակիչ դրույթներ

16. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

17. Պայմանագիրը և հավելվածները կնքված են հայերեն լեզվով, Պայմանագիրը կազմված է 2 էջից և ունի 2 հավելված՝ Հավելված 1՝ 2 էջ, Հավելված 2՝ 1 էջ, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետարան	ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ
Ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16	Ք. Երևան, Ռաֆֆի 57
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900211287033	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900018003203
ՀՎՀՀ 05507437	ՀՎՀՀ 01804186
ՀՀ Շիրակի մարզպետ՝	Տնօրեն՝
Տ.Պետրոսյան	Ա. Բլեյան

Կ.Տ.

Կ.Տ.

«Հավելված 1»

«29» Հունիսի 2019 թ. N ՄՍԲ 1 պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
/ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ/
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ «ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ

Անցկացման ժամկետը՝ 30-ը մայիսի 2019 թ.

Անցկացման վայրը՝ Հառիճի վանական համալիրի տարածք

ՀՀ Շիրակի մարզպետարանի նախաձեռնությամբ 2014 թվականից «Մշակութային միջոցառումների իրականացում» պետական ծրագրով ՀՀ պետական բյուջեից հատկացվող միջոցների հաշվին ՀՀ Շիրակի մարզում մարզի երաժշտական և արվեստի դպրոցների մանկական, Հայորդյաց տան, ինչպես նաև Երևանից հրավիրված երգչախմբերի, անհատ կատարողների, հայ առաքելական եկեղեցու սարկավագների և երգեցիկ խմբերի մասնակցությամբ անց է կացվում «Հոգևոր երգերի մարզային փառատոն»:

2019 թվականին անցկացվելիք «Հոգևոր երգերի մարզային փոռատոն»-ը նվիրվում է Կոմիտասի 150-ամյակին:

Միջոցառումը բաղկացած կլինի 2 մասից: Առաջին հատվածում մասնակիցները Հառիճավանքի բակում կերգեն հոգևոր 3 երգեր, որոնք նախապես սովորել են միասնական երգչախմբում երգելու համար:

1. Հայր մեր – Կոմիտաս (մանկական տարբերակ),
2. Սուրբ Աստուած- Կոմիտասի պատարագից,
3. Քրիստոս ի մեջ- Կոմիտասի պատարագից:

Այնուհետև հյուրերին կբաժանվեն երգերի բառերն ու կանցկացվի երգուսուցում: Երգուսուցման ընթացքում, յուրաքանչյուր երգից առաջ 2 հաղորդավար՝ «Իրական դպրոցի» պատանիներից՝ 1 աղջիկ ու 1 տղա, երգերի մասին տեղեկություններ կհաղորդեն: Այս ամենը կտևի մոտ 30 րոպե: Բացի պատանի վարողներից, միջոցառումը կվարի արհեստավարժ հաղորդավարը, ով ընթացքում Կոմիտասի, հայ հոգևոր երաժշտության, խազերի մասին տեղեկություններ կհաղորդի ներկաներին: Միջոցառման երկրորդ հատվածում հաղորդավարը հանդիսատեսին կհրավիրի ունկնդիր լինելու միջոցառման համերգային մասին, որտեղ մասնակից երգչախմբերի կողմից կկատարվեն Հայ հոգևոր երգեր:

Միջոցառման երկրորդ՝ համերգային մասին կմասնակցեն հետևյալ երգչախմբերն իրենց կատարումներով՝

Հառիճավանքի Թրբանճյան ընծայարանի երգչախումբ

1. Հայր մեր - Կոմիտաս

«Ռադիո Մարիամ»-ի երգչախումբ

2. Ով զարմանալի - Կոմիտաս

3. Մեծացուսցե - Կոմիտաս

«Խազեր» անսամբլ

4. Բարեխոսությամբ -Կոմիտասի պատարագից

5. Քրիստոս պատարագյալ -Կոմիտասի պատարագից

Պեմզաշենի արվեստի դպրոցից մենակատար երեխա

6.Տերողորմեա - -Կոմիտաս

«Ընտանիք» կենտրոնի երգչախումբ

7. Այսօր ցնծան -Գ. Նարեկացի, մշ. Մ. Եկմալյանի

Ամասիայի մանկական արվեստի դպրոցի երգչախումբ

8. Անձինք նվիրեալք - Կոմիտաս

Գյումրու թիվ 5երաժշտական դպրոցի երգչախումբ

9.Մարմին Տէրունական – Կոմիտաս

Սեբաստացիներ ուսուցչական երգչախումբ

10. Սիրո քո հուր -Կոմիտաս

11.Տերողորմեա –Կոմիտաս

Սբ. Աստվածածին եկեղեցվո երգչախումբ

12. Տաղ Սբ. Աստվածածնա - Մ. Եկմալյան

13. Տեր ողորմեա - Զարեհ Արք. Ազնավուրյան

Միջոցառման առանձնահատկությունն այն է, որ մասնակիցների մեջ են ոչ միայն մասնագիտացված երգչախմբեր ու երաժիշտներ, այլև սիրողական խմբեր, որոնք կփորձեն հաղթահարել հոգևոր երգերի կատարման բարդություններն ու մասնակցել միջոցառմանը:

Միջոցառման բոլոր մասնակիցները «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր»-ի կողմից կպարգևատրվեն պատվոգրերով և հուշանվերներով, որն էլ կլինի կազմակերպիչ կողմի ներդրումը:

Միջոցառման մասնակիցների համար կապահովվի տրանսպորտ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետարան	ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ
Ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16	Ք. Երևան, Բաֆֆի 57
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900211287033	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900018003203
ՀՎՀՀ 05507437	ՀՎՀՀ 01804186
ՀՀ Շիրակի մարզպետ՝	Տնօրեն՝
Տ.Պետրոսյան	Ա. Բլեյան
Կ.Տ.	Կ.Տ.

«Հավելված 2»

«29» Նոյեմբեր 2019 թ. N ՄՍԲ 1 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ «ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ

h/h	Ծախսի անվանումը	Քանակը	Չափման միավորը	Միավոր արժեքը /ՀՀ դրամ/	Ընդամենը արժեքը /ՀՀ դրամ/
1.	Ձայնային տեխնիկական միջոցների վարձակալում	1	անգամ	140 400	140 400
2.	Մասնակիցների ուղևորափոխադրում՝ • Գյումրի-Հառիճ-Գյումրի	9	անգամ	15 000	230 000
	• Վահրամաբերդ-Հառիճ-Վահրամաբերդ	1	անգամ	20 000	
	• Ամասիա-Հառիճ-Ամասիա	1	անգամ	30 000	
	• Պեմզաշեն-Հառիճ-Պեմզաշեն	1	անգամ	15 000	
	• Երևան-Հառիճ-Երևան	1	անգամ	30 000	
3.	Ծրագրի ղեկավար	1	մարդ	70 000	70 000
4.	Հաղորդավար	1	մարդ	60 000	60 000
Ընդամենը (առանց ավելացված արժեքի հարկի)՝					500 400
Ավելացված արժեքի հարկը՝					100 100
Ընդամենը՝					600 500

Ընդհանուր ծախսը կազմում է 500 400 (հինգ հարյուր հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, առանց ավելացված արժեքի հարկի:

Ավելացված արժեքի հարկը կազմում է 100 100 (հարյուր հազար հարյուր) ՀՀ դրամ:

Պետական Պատվերի գինը կազմում է 600 500 (վեց հարյուր հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետարան	ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ
Ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16	Ք. Երևան, Ռաֆֆի 57
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900211287033	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900018003203
ՀՎՀՀ 05507437	ՀՎՀՀ 01804186
ՀՀ Շիրակի մարզպետ՝	Տնօրեն՝
Տ.Պետրոսյան	Ա. Բլեյան

Կ.Տ. Կ.Տ.

-300-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
հուլիսի 4-ի N 601 որոշմամբ

ԿԵՆՔ

ՎԿԱՅԱԿԱՆ

03 Ա 059272

իրավաբանական անձի պետական գրանցման

„Երևանի „Միքրոտ Սերվիսիզի „կրթահամալիր„ պետական ոչ առևտրային կազմակերպություն
(անվանումը)

Գրանցված է պետական ռեգիստրի Շահումյանի գ/բ կողմից
(գրանցման անվանումը)

Գրանցման համարը 290.210.02886

Գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը 28.04.2003թ

Իրավաբանական անձի ծածկագիրը (կոդը) 16091803

Իրավաբանական անձի տեսակը ոչ առևտրային

Գործունեության ժամկետը մինչև անժամկետ

Վկայականն ուժի մեջ է միայն ներդիրի հետ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
(ստորագրություն)

Կ.Տ.

«28» ապրիլի 2003 թ.

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
հուլիսի 4-ի N 601 որոշմամբ

ՆԵՐԴԻՐ 001

իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի

Վկայական 03 Ա 059272

Անվանումը „Երևանի „Միքրոտ Սերվիսիզի „կրթահամալիր „ պետական ոչ առևտրային կազմակերպություն

Գտնվելու վայրը (հասցեն) 375064 գ. Երևան Հ/Կ Բ-1 թաղ., Բարեջանյան 25

Այլ տեղեկություններ Պետական-հասարակական ՀՀ բարձ. կրթ. և գիտ. նախ. „Միքրոտ Սերվիսիզ „կրթական. համալիր „ ՊՈ (գր.թիվ 290.140.00170) իրավախումբը: Տնօրեն՝ Ռուբեն Գալստյան անձ. AC 0418544 17.11.1998թ. ՕՈՒ, հասցեն՝ գ. Երևան, Շահումյանի 7-րդ փող., տուն 11:

Ներդիրն ուժի մեջ է վկայականի հետ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
(ստորագրություն)

Կ.Տ.

«28» ապրիլի 2003 թ.

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
հուլիսի 4-ի N 601 որոշմամբ

ՆԵՐԴԻՐ 003

իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի

Վկայական 03Ա059272

Անվանումը «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն

Գտնվելու վայրը (հասցեն) Z

Այլ տեղեկություններ Անդամների փոփոխությունը գրանցվել է 08.12.2006թ.
Անդամն՝ Իլլեյան Աշոտ
անձն. AB 0620686 14.02.1998թ. 003
ք. Երևան, Գայկունիկյաց փ. 30/2 բն. 13

Ներդիրն ուժի մեջ է վկայականի հետ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

«08» դեկտեմբեր 2006 թ.

Կ. Տ.

Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
հուլիսի 4-ի N 601 որոշմամբ

ՆԵՐԴԻՐ 002

իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի

Վկայական 03Ա059272

Անվանումը «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն

Գտնվելու վայրը (հասցեն) Z

Այլ տեղեկություններ Անդամների փոփոխությունը գրանցվել է 12.10.2006թ.
Անդամն՝ Խաչատուրյան Հրաչիա
անձն. AA 0409599 31.05.1996թ. 005
ք. Երևան, Գրիգոր պրշ. 46-12.

Ներդիրն ուժի մեջ է վկայականի հետ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

«12» հոկտեմբեր 2006 թ.

Կ. Տ.

ՆԵՐԴԻՐ 004

Իրավաբանական անձի պետական գրանցման
N 03Ա059272 վկայականի

Իրավաբանական անձի անվանումը **ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՊՈԱԿ)**

Գտնվելու վայրը

Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար, **Տնօրեն՝**
ԱՇՈՏ ԲԼԵՅԱՆ ՇԱՄԽԱԼԻ
անձնագիր **AN0351875,** տրվ. **2013-02-01, 011** կողմից,
հասցե **ՉԱՅԿՈՎՍԿՈՒ Փ. / Շ / 30 / 13 ԿԵՆՏՐՈՆ 0010 ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**

Իրավաբանական անձի իրավանախորդի անվանումը և գրանցման համարը

Այլ տեղեկություններ **Գործադիր մարմնի ղեկավարի անձնագրային տվյալների փոփոխության գրանցում: Փոփոխություն(ներ)ը գրանցվել է(են) 2014-10-08-ին**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

_____
(ստորագրություն)

"08" 10 2014 թ.

Ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ միասին

Կազմված է 15.05.2017թ. և
բաղկացած է 7 էջից

Տպագրված է 3 օրինակ
Օրինակ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
15.05.2017թ.
N 533-Ն հրամանով

Նախարար՝ _____ Լ. Մկրտչյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 28.04.2003թ.

գրանցման համար՝ 290.210.02886
հարկ վճարողի հաշվարկային համար 01804186
28.04.2003թ. գրանցված կանոնադրության
թիվ _____ փոփոխությունը գրանցված է
պետական ռեգիստրի գործակալության
կողմից

«19» 05 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2017

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2003 թվականի ապրիլի 25-ի N 259-Ն հրամանով հաստատված «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ՝

1) 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կրթահամալիր) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող փորձարարական-հետազոտական, նախադպրոցական, հանրակրթական հեղինակային, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական փորձնական, նախասիրական, լրացուցիչ (այդ թվում՝ արտադպրոցական) կրթական ծրագրեր իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:».

2) 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«5. Կրթահամալիրի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ռաֆֆի 57:».

3) 6-րդ կետում «կազմակերպություն» բառից հետո լրացնել «, կրճատ անվանումը՝ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր, հապավումը՝ ՄՍԿՀ» բառերը:

4) լրացնել նոր՝ 6.1 կետ՝

«6.1 Կրթահամալիրն ունի էլեկտրոնային կայք՝ www.mskh.am (այսուհետ՝ mskh.am), որը գործում է որպես կրթահամալիրի պաշտոնական տեղեկատվական օրգան, զանգվածային լրատվական միջոց և սոցիալական ցանց, ներառում է կրթական ծրագրերի էլեկտրոնային մատենավարությունը, բլոգային ուսուցման համակարգը՝ մանկավարժական աշխատողների, սովորողների, ակումբների, խմբերի բլոգները, կրթահամալիրի աշխատողների, սովորողների, ծնողների փոստային համակարգը:».

5) 11-րդ կետում «միջնակարգ» բառից հետո հանել «(լրիվ)» բառը.

6) 14-րդ կետում «մանկավարժական պահանջներին համապատասխան» բառերից հետո հանել «պետական և» բառերը.

7) 15-րդ կետում՝

ա. հանել «Մասնաճյուղի կանոնադրությունը կազմվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունների հիման վրա:» նախադասությունը,

բ. «Կրթահամալիրի մասնաճյուղերն են.» պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

« Կրթահամալիրի մասնաճյուղերն են՝

ա) Կրթահամալիրի Արևմտյան դպրոց-պարտեզ (նախկինում՝ Բ-4 թաղամասի հիմնական դպրոց-մանկապարտեզ), Արևելյան դպրոց-պարտեզ (նախկինում՝ Բ-1 թաղամասի հիմնական դպրոց-մանկապարտեզ), Հյուսիսային դպրոց-պարտեզ (նախկինում՝ գեղարվեստի խորացված ուսուցմամբ հանրակրթական դպրոց), Հարավային դպրոց-պարտեզ (նախկինում՝ Մայքլ Գանյանի անվան հանրակրթական դպրոց), տեխնոլոգիական կրթության Միջին դպրոց (նախկինում՝ Արհեստագործական դպրոց), Ավագ դպրոց (նախկինում՝ Վարժարան) հանրակրթական ուսումնական հաստատությունները.

բ) քոլեջ (նախկինում՝ մանկավարժական ուսումնարան) միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունը.

գ) գեղարվեստի դպրոց, երաժշտության դպրոց, պարի ու թատրոնի դպրոց, մարզադպրոց, շախմատի դպրոց, բնագետի դպրոց, բնասեր-բնապահպանի դպրոց, բնության գրկում դպրոց լրացուցիչ կրթական ծրագրեր իրականացնող հաստատություններ՝ ուսումնական կենտրոնները:».

8) լրացնել նոր՝ 15.1 կետ՝

«15.1 Կրթահամալիրի կազմակերպական կառուցվածքը Տնօրենի ներկայացմամբ հաստատում է կառավարման խորհուրդը: Իր կանոնադրական նպատակները և խնդիրները լուծելու համար կրթահամալիրն ստեղծում է կենտրոններ, ծառայություններ, ուսումնա-արտադրական արհեստանոցներ,

լաբորատորիաներ, ակումբներ, կաբինետներ, կրթական փոխանակումների կենտրոն՝ իր կացարաններով, մանկավարժության կենտրոն, գրադարան, լրացուցիչ կրթության կենտրոններ, որոնց աշխատակարգերը Տնօրենի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի կառավարման խորհուրդը:» .

9) ուժը կորցրած ճանաչել 16-րդ, 18-24-րդ, 27-րդ, 32-րդ, 34-րդ, 45-50-րդ, 80-84-րդ կետերը.

10) 25-րդ կետից հանել «հանրակրթական դպրոցների տարրական կրթության դասարանները և» բառերը.

11) 31-րդ կետից հանել «Կրթահամալիրը միջոցներ է ձեռնարկում տեղական ինքնակառավարման մարմնի՝ կրթահամալիրին ամրագրած մասում ապրող՝ պարտադիր ուսուցման ենթակա բոլոր երեխաներին ուսման մեջ ընդգրկելու համար» նախադասությունը.

12) 33-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«33. Ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են կրթական ծրագրի ուսումնական պլանի, սովորողի անհատական ուսումնական պլանի, կրթահամալիրի ուսումնական օրացույցի, ուսումնական ժամանակացույցի և դասացուցակների հիման վրա:».

13) լրացնել նոր՝ 33.1, 33.2, 33.3, 33.4, 33.5, 33.6 և 33.7 կետեր՝

«33.1 Կրթական ծրագրի ուսումնական պլանը, առարկայական ծրագրերը, ուսուցման կազմակերպման ձևերը, գնահատման համակարգը մշակվում են կրթական պետական չափորոշիչների, հենքային ուսումնական պլանների, կրթական ծրագրի չափորոշչի հիման վրա:

33.2 Կրթահամալիրի մասնաժողովի ներկայացմամբ մասնաճյուղերի ուսումնական պլանները, առարկայական ծրագրերը, ուսումնական տարում գործածվող ուսումնական ձեռնարկների և մեթոդական ուղեցույցների ցանկը հաստատում է կրթահամալիրի խորհուրդը:

33.3 Ուսուցումը կազմակերպվում է խմբով՝ դասարան, կուրս, սովորողների ընտրությամբ գործունեության և դասընթացի ուսուցման խումբ, սովորողների նախասիրությունների զարգացման ակումբ, ճամփորդության խումբ,

ճամբարական խումբ, ջոկատ, այցելության խումբ, մասնագիտական փորձառության խումբ, և անհատական:

33.4 Խմբերում սովորողների թիվը որոշվում է Կրթահամալիրի ծախսերի նախահաշվով ամրագրված ցուցանիշների համաձայն:

33.5 Խմբային ուսուցումը կազմակերպվում է դասերի, ակումբային պարապմունքների, ուսումնական նախագծերի, ուսումնական-հայրենագիտական ճամփորդությունների, մասնագիտական փորձառությունների, ճամբարների, ստեղծագործական հավաքների, ստուգատեսների, համերգների, ցուցահանդեսների, ներկայացումների (ուսումնական պարապմունքներ) ձևով՝ ապահովելով ուսուցման անհատականացում, ուսուցման կազմակերպման (տեղ, ձև, ժամանակ, պայմաններ) հարմարվածությունը անհատին, ամբողջական ներառականություն:

33.6 Կրթական ծրագրով կիրառվում են առկա, հեռավար, առցանց, տնային ուսուցման ձևեր՝ Սովորողին տալով պահին, պայմաններին համապատասխան ձևն ընտրելու հնարավորություն:

33.7 Լրացուցիչ կրթական ծրագրերը, այդ թվում՝ Սովորողի տնային ուսումնական աշխատանքը, ուղղված են Սովորողի կրթական պատվերի կատարմանը: Լրացուցիչ կրթական ծրագիրը՝ որպես ծառայություն՝ իրականացվում է մասնաճյուղերում, ուսումնա-արտադրական արհեստանոցներում, լաբորատորիաներում, ակումբներում, կաբինետներում:».

14) 35-րդ կետից հանել «՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ կրթահամալիրի գիտելիքների գնահատման կենտրոնում գիտելիքների ստուգմամբ» բառերը.

15) լրացնել նոր՝ 38.1 կետ՝

«38.1 Խորհուրդները իրենց գործունեությունը կարող են ծավալել նաև վիրտուալ միջավայրում».

16) 43-րդ կետի «ժգ» ենթակետում «նախարարության հաստատմանը» բառերը փոխարինել «նախարարություն» բառով.

17) 51-րդ կետում «Խորհրդի անդամների թեկնածուներ առաջադրում են՝» բառերից հետո 3 պարբերությունները շարադրել նոր խմբագրությամբ՝

«1) կրթահամալիրի աշխատողների ժողովը, որը փակ քվեարկությամբ ընտրում է Խորհրդի մանկավարժական աշխատողներին (4 անդամ).

2) մասնաճյուղերի ծնողական խորհուրդները, որոնք փակ քվեարկությամբ, ընտրում են Խորհրդի իրենց անդամներին (2 անդամ՝ դպրոց-պարտեզներից, մեկական՝ Միջին դպրոցից և Ավագ դպրոցից).

3) Քոլեջի, Ավագ դպրոցի սովորողների ժողովները ներկայացնում են իրենց թեկնածուներին (երկուական անդամ):».

18) 55-րդ կետի՝

ա. «դ» ենթակետում «, աշխատանքային» բառից առաջ լրացնել «կազմակերպական կառուցվածքը» բառերը,

բ. «ը» ենթակետում «նախարարության հաստատմանն է ներկայացնում կրթահամալիրի հաստիքացուցակը» բառերը փոխարինել «կրթահամալիրի հաստիքացուցակը ներկայացնում է նախարարություն» բառերով.

19) 61-րդ կետում «արձանագրվում են» բառերից հետո լրացնել «և հրապարակվում խորհրդի կայքէջում, mskh.am:» բառերը.

20) 75-79-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝

«75. Կրթահամալիրում մանկավարժական աշխատանքի կարող է ընդունվել կրթահամալիրի մանկավարժական աշխատողի պաշտոնի նկարագրությամբ որոշված պահանջներին բավարարող մասնագետը՝ Խորհրդի որոշած հրապարակային ընտրության կարգով:

76. Կրթահամալիրի մանկավարժական և մյուս աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, Կանոններով, աշխատողի պաշտոնի նկարագրությամբ, աշխատանքային պայմանագրով:

Կրթահամալիրի մասնաճյուղի սովորողի և Ծնողի իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով, Կանոններով, ուսումնառության պայմանագրով:

Կրթահամալիրի մասնաճյուղի սովորողը պատասխանատվություն է կրում Կանոններով, ուսումնառության պայմանագրով իր պարտականությունների կատարման համար:

Մասնաճյուղը կարող է միակողմանի լուծել պայմանագիրը՝ այդ մասին տասն օր առաջ տեղյակ պահելով Ծնողին՝ նրա և մասնաճյուղի միջև կնքված պայմանագրային դրույթները Սովորողի կամ Ծնողի կողմից չպահպանվելու դեպքում:».

21) ամբողջ տեքստում «մանկավարժական ուսումնարան» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով փոխարինել «քոլեջ» բառով՝ համապատասխան հոլովաձևերով:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության 28. 04. 2003թ. գրանցված կանոնադրության բաղկացուցիչ մասը:

Գրանցված է իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի
տարածքային բաժնում
Գրանցման համարը 290.210.02886
Գրանցման ամսաթիվը 28.04.2003թ
Կկայականի համարը 034.003153
Ծածկագիր ----------
Բաժնի պետ ---------- Կ. Հովսեփյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
ՀՀ ԿԳ նախարարի
«25» 04 2003թ.
N 259-Ն հրամանով
Աշխատակազմի ղեկավար
Ս. Մինասյան
«25» 04 2003թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կրթահամալիր) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող փորձարարական-հետազոտական, նախադպրոցական, հանրակրթական, նախամասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, նախասիրական, լրացուցիչ (այդ թվում՝ արտադպրոցական) կրթական ծրագրեր իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:
2. Կրթահամալիր պետական ոչ առևտրային կազմակերպությունը ՀՀ կրթության և գիտության նախարարության «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր պետական ձեռնարկության (պետական գրանցման վկայական՝ N003153, սերիա՝ 01 Ա, տրված՝ 19.10.1994թ., ծածկագիր՝ 01804186) իրավահաջորդն է: Կրթահամալիր պետական ձեռնարկության գույքը պատկանում է կրթահամալիրին սեփականության իրավունքով: Կրթահամալիրն իր պարտավորությունների համար պատասխանատու է իր գույքով: Կրթահամալիրն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
3. Կրթահամալիրի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ հիմնադիր): Լիազորված պետական մարմինը ՀՀ կրթության և գիտության նախարարությունն է (այսուհետ՝ նախարարություն):
4. Կրթահամալիրն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
5. Կրթահամալիրի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Հարավարևմտյան զանգված, Բ-1 թաղամաս, Ա. Բաբաջանյան պողոտա, 25:
6. Կրթահամալիրն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ, դրոշմակնիք և անհատականացման այլ միջոցներ:
   Կրթահամալիրի անվանումն է՝
   «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն:
7. Կրթահամալիրն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվներ:
8. Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար կրթահամալիրը կարող է ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից՝ օրենքով սահմանված կարգով:
9. Կրթահամալիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:
10. Կրթահամալիրում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

II. ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

11. Կրթահամալիրի գործունեության առարկան նախադպրոցական, ընդհանուր տարրական, հիմնական, միջնակարգ (լրիվ), հատուկ (այդ թվում՝ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների) նախամասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, նախասիրական (լրացուցիչ) կրթական ծրագրերի իրականացումն է: Կրթահամալիրի գործունեության նպատակներն են՝

- << կառավարության 10.05.1990թ. N216 որոշմամբ հաստատված ազգային դպրոցի հարուստ ավանդույթների վերածնունդը, առաջավոր կրթական, այդ թվում կրթահամալիրի հետազոտող մանկավարժների մշակած մոտեցումների ներդրում.
- երեխաների (այդ թվում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների) ներդաշնակ ու բնական զարգացման համար մանկավարժական–հոգեբանական, սոցիալական անհրաժեշտ պայմանների ապահովում:

Կրթահամալիրի նպատակներից բխում են կրթահամալիրի << օրենսդրությանը չհակասող հետևյալ խնդիրները

- անհատականության զարգացման և ազատ գործունեության, փոխադարձ հարգանքի, վստահության ու գործընկերության մանկավարժության ստեղծում և կիրառում.
- նախադպրոցական, հանրակրթական, նախամասնագիտական, միջին մասնագիտական և լրացուցիչ կրթության հաստատությունների հնարավորությունների համախմբում ընդհանուր, հատուկ (այդ թվում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների) և լրացուցիչ կրթության ինտեգրացումը ապահովելու նպատակով.
- դպրոց-համալիրի պայմաններում անհատի ընդունակությունների առավելագույն դրսևորում և զարգացում յուրաքանչյուր անձի (այդ թվում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների) ցանկալի գործունեության բավարարման ճանապարհով.
- մանկապարտեզի, դպրոց-մանկապարտեզի ու կրտսեր դպրոցի համար կրթահամալիրի մանկավարժությունը յուրացրած ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում.
- այլոց մանկավարժական առաջավոր փորձի, կրթական գործի կազմակերպման որակապես նոր ձևերի ու մեթոդների վերաիմաստավորում ու ներդրում.
- սահմանված կարգով կրթական, տրամաբանական խաղերի հավաքում, դասակարգում ու տարածում, կրթահամալիրի մանկավարժությանն անհրաժեշտ նոր խաղերի, խաղալիքների, ուսումնական գույքի և պիտույքների մշակում, հետազոտող ուսուցիչների հեղինակած կրթական այլընտրանքային ծրագրերի, ուսումնական ձեռնարկների, մեթոդական ուղեցույցների, ուսուցման նոր մեթոդների փորձարկում.
- հաղորդակցության մանկավարժության մշակում, կրթության սուբյեկտների միջև իրական ու լիարժեք հաղորդակցության ապահովում ժամանակակից տեղեկատվական ու հրատարակչական տեխնոլոգիաների ու միջոցների օգտագործմամբ:

12. Կրթահամալիրը կրթական գործունեությունն իրականացնում է ի շահ անհատի, հասարակության և պետության, ապահովում է աշակերտների կողմից հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, պայմաններ ստեղծում ինքնակրթության և լրացուցիչ (նախասիրական, նախամասնագիտական) կրթության պահանջմունքների բավարարման համար:
13. Կրթահամալիրի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության և մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:
14. Կրթահամալիրը պատասխանատու է պետական կրթական չափորոշիչներին, սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին, նրանց կյանքի անվտանգության, առողջության պահպանման և մանկավարժական պահանջներին համապատասխան պետական և հեղինակային (պետական այլընտրանքային) ծրագրերի իրագործման, ուսուցման մեթոդների և ձևերի մշակման ու ընտրության համար:

Կրթահամալիրն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները

- նախադպրոցական դաստիարակություն, միջին մասնագիտական և նախամասնագիտական, ընդհանուր միջնակարգ, ընդհանուր հատուկ (այդ թվում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների) կրթություն.
- նախապատրաստական դասընթացների կազմակերպում.
- մասնագիտական ուսուցման դասընթացների կազմակերպում.
- կադրերի վերապատրաստում , վերարակավորում և որակավորման բարձրացում.,
- ուսումնաարտադրական գործունեության և սպասարկման ծառայությունների իրականացում.
- գրահրատարակչական գործունեության իրականացում.

- կրթական տեղեկատվական, մշակութային, մարզական գործունեություն և ծառայություններ.
- կիրառական արվեստի և արհեստների ուսուցում.
- ուսուցման միջոցների ու պիտույքների, մանկական խաղերի ու խաղալիքների, դպրոցական գույքի մշակում, փորձնական արտադրություն և վաճառք.
- ծաղկաբուծություն, հրուշակագործություն.
- լրացուցիչ հանրակրթական ծրագրերի և կրթական ծառայությունների իրականացում.
- արտադպրոցական դաստիարակության կազմակերպում.
- համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում.
- սովորողների և ուսուցիչների սննդի կազմակերպում.
- ուսումնաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում:

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կրթահամալիրը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

III. ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

15. Կրթահամալիրը նախադպրոցական, հանրակրթական (այդ թվում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների), նախամասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, նախասիրական, լրացուցիչ (այդ թվում արտադպրոցական) կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների (այսուհետ մասնաճյուղ) փորձարարական-հետազոտական միավորում է:
Մասնաճյուղը իրավաբանական անձ չէ, չունի առանձին հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
Մասնաճյուղը կրթահամալիրի կողմից լիազորված է իրականացնելու կրթահամալիրի գործունեության առարկայից, նպատակներից և խնդիրներից բխող գործունեություն:
Մասնաճյուղը ունի չկոդավորված կնիք, ձևաթուղթ և խորհրդանիշ:
Կրթահամալիրի մասնաճյուղի գործունեությունը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ, կրթահամալիրի, մասնաճյուղի կանոնադրություններով: Մասնաճյուղի կանոնադրությունը կրթահամալիրի գործադիր տնօրենի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի խորհուրդը:
Մասնաճյուղի ղեկավարին (տնօրենին) կրթահամալիրի գործադիր տնօրենի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի խորհուրդը:
Մասնաճյուղի կանոնադրությունը կազմվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունների հիման վրա: Կրթահամալիրի գործադիր տնօրենը մասնաճյուղի ղեկավարի հայտերի հիման վրա յուրաքանչյուր ուստարվա համար մասնաճյուղի օգտագործմանն է հանձնում անհրաժեշտ ուսումնական շինություն (տարածքներ) և այլ գույք: Մասնաճյուղի զարգացման ծրագրերը մասնաճյուղի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի խորհուրդը:
Կրթահամալիրի մասնաճյուղերն են.
պետական հանրակրթական դպրոցներ՝ Բ-4 թաղամասի հիմնական դպրոց-մանկապարտեզ, Բ-1 թաղամասի հիմնական դպրոց-մանկապարտեզ, արհեստագործական դպրոց, գեղարվեստի խորացված ուսուցմամբ հանրակրթական դպրոց, վարժարան, Մայքլ Գանյանի անվան հանրակրթական դպրոց (այսուհետ՝ հանրակրթական դպրոց).
միջին մասնագիտական հաստատություն՝ պետական մանկավարժական ուսումնարան (այսուհետ՝ մանկավարժական ուսումնարան).
լրացուցիչ կրթության (նախասիրական) դպրոցներ և կենտրոններ՝ գեղարվեստի դպրոց, երաժշտության դպրոց, պարարվեստի դպրոց, հեռուստալրագրողի դպրոց, մարզադպրոց, շախմատի դպրոց, ինֆորմատիկայի դպրոց, Արատեսի դպրական կենտրոն («Դպրոց բնության գրկում» օջախ և նախաբանակային պատրաստության ճամբար), բնասերի դպրոց, լրագրողի դպրոց, օտար լեզուների ուսուցման կենտրոն, «Մեխակ» կրթամշակութային կենտրոն, «Ծիր Կաթին» մանկական թատրոն (այսուհետ՝ նախասիրության դպրոցներ).
ուսումնական, մեթոդական-հետազոտական կենտրոններ՝ մանկավարժական հետազոտական - մեթոդական կենտրոն, գրադարան, գիտելիքների գնահատման կենտրոն, «Շաղիկ» հրատարակչություն, տեխնիկական կենտրոն (այսուհետ՝ ուսումնական կենտրոններ):

16. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության տևողությունը 11 տարի է, հիմնական ընդհանուր կրթության տևողությունը 9 տարի է:
Մինչև 2001-2002 ուստարին հանրակրթական դպրոց ընդունվածների համար միջնակարգ ընդհանուր կրթության տևողությունը 10 տարի է, հիմնական ընդհանուր կրթության տևողությունը 8 տարի:
Մանկավարժական ուսումնարանում ուսման տևողությունը 3 տարի է:
Նախասիրության դպրոցներում ուսման տևողությունը որոշվում է նախասիրության աստիճաններով: Վարժարանը, արհեստագործական դպրոցը, գեղարվեստի խորացված ուսուցմամբ դպրոցը, Մ. Գանյանի անվան հանրակրթական դպրոցը հաջողությամբ ավարտած սովորողները ստանում են ընդհանուր միջնակարգ (լրիվ) կրթության վկայականներ:
Մանկապարտեզ հաճախում են 3-6 տարեկան երեխաներ: 5-6 տարեկան երեխաների համար կրթահամալիրի հանրակրթական դպրոցներում գործում են նախապատրաստական խմբեր:
Ծնողների ցանկությամբ հանրակրթական դպրոցներում կարող են գործել երկարօրյա ուսուցման խմբեր (դասարաններ):
17. Կրթահամալիրի վարժարանում և արհեստագործական դպրոցում, նախասիրության դպրոցներում կարող են սովորել ինչպես կրթահամալիրի հանրակրթական դպրոցների, այնպես էլ այլ հանրակրթական դպրոցների համապատասխան դասարանների աշակերտները: Կրթահամալիրի խորհրդի որոշմամբ կրթահամալիրը կարող է ունենալ գիշերօթիկ պայմաններ (հանրակացարան ու հյուրատուն):
18. Դպրոցի դասարանի միջին խտությունը սահմանվում է 25-30 սովորող տարրական և միջին դասարանների համար, 20-25 սովորող ավագ դասարանների համար սանիտարական նորմերի պահպանմամբ (ընդ որում, սովորողների թիվը տարրական և միջին դասարանում չի կարող գերազանցել 35-ը, իսկ ավագ դասարանում 30-ը): Առանձին դեպքերում ավելի պակաս խտությամբ դասարան կարող է բացվել նախարարության թույլտվությամբ նախապես համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ, կամ հաստատության լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրների հաշվին խորհրդի որոշմամբ:
19. Հանրակրթական ծրագրերին համապատասխան հանրակրթական դպրոցը բաժանվում է տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ (լրիվ) ընդհանուր դպրոցների:
20. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունն իրականացվում է հետևյալ հաջորդական աստիճաններով
տարրական (1-3-րդ դասարաններ),
միջին (4-9-րդ դասարաններ),
ավագ (10-11-րդ դասարաններ):
Տարրական և միջին դասարանները միասին կազմում են հիմնական դպրոց:
21. Տարրական դասարանն ապահովում է երեխայի ընդհանուր զարգացումը, կարդալու, գրելու, հաշվելու հմտությունների և կարողությունների, բարեկիրթ խոսքի ու վարվելաձևի, ինքնավերահսկման պարզագույն հմտությունների, անձնական հիգիենայի և առողջ կենցաղի հիմունքների տիրապետումը:
Տարրական կրթությունն ավարտվում է գիտելիքների ստուգմամբ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ նախարարություն) սահմանած կարգով:
22. Միջին դասարաններում ուսուցումը նպատակաուղղվում է առողջ ապրելակերպի, աշխարհի և բնության վերաբերյալ սովորողների գիտական պատկերացման ձևավորմանը, ինքնուրույն աշխատանքի, կրթության և հասարակական ինքնուրույն գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների նվազագույն ծավալի ապահովմանը:
23. Ավագ դասարաններում ուսուցումը նպատակաուղղվում է հենքային հանրակրթական պատրաստությունն ապահովող գիտելիքների յուրացմանը: Ավագ դպրոցում, սովորողների հակումներին, կարողություններին և ընդունակություններին համապատասխան, կարող է լրացուցիչ կրթական ծրագրերով իրականացվել տարբերակված (հոսքային, այդ թվում արհեստագործական) ուսուցում:
Հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունն ավարտվում է պետական քննություններով:
24. Հատուկ (այդ թվում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և արտակարգ ընդունակություններ դրսևորածների) հանրակրթական ծրագրերը մշակվում են հիմնական

ընդհանուր հանրակրթական ծրագրերի հիման վրա հաշվի առնելով սովորողների տարիքային, հոգեբանական, ֆիզիկական զարգաման առանձնահատկություններն ու կարողությունները:

25. Կրթահամալիրի հանրակրթական դպրոցների տարրական կրթության դասարանները և մանկապարտեզային խմբերը բազային են կրթահամալիրի մանկավարժական ուսումնարանի ուսանողների համար. սովորողները, նրանց դասախոսները ուսումնական պլանով և աշխատակարգերով նախատեսված մեթոդական-հետազոտական աշխատանքներ են կատարում, ուսանողները ուսումնական փորձառությունն են անցկացնում:
26. Կրթահամալիրի նախասիրության դպրոցների հնարավորությունները լիարժեք ծառայում են նաև կրթահամալիրի հանրակրթական դպրոցների և մանկավարժական ուսումնարանի ուսումնական պլանով նախատեսված առարկաներին և պարապմունքներին:
27. Արատեսի դպրական կենտրոնի կառուցապատումը կատարվում է հիմնադրի 10.05.1990թ. N216 որոշմամբ: Արատեսի դպրական կենտրոնում (որպես «դպրոց բնության գրկում») ուսումնական տարվա ընթացքում և արձակուրդներին էկոլոգիական կրթություն են ստանում և կազդուրվում կրթահամալիրի մասնաճյուղերի սովորողներն ու նրանց ուսուցիչները: Դպրական կենտրոնը որպես ուսումնական-հետազոտական փորձարական բազա է ծառայում մանկավարժական ուսումնարանի, արհեստագործական դպրոցի սովորողների, բնասերի, մարզադպրոցի և գեղարվեստի դպրոցի սաների համար:
28. Կրթահամալիրում ուսուցման լեզուն գրական հայերենն է:Նախարարության սահմանած կարգով ազգային փոքրամասնությունների համար ստեղծված դասարանում (դասարաններում) ուսուցումն իրականացվում է մայրենի լեզվով հայերենի պարտադիր ուսուցմամբ:
29. Կրթահամալիրի մանկավարժական աշխատողների մեթոդական - հետազոտական, որակավորման բարձրացման գործունեությունը կազմակերպում են կրթահամալիրի առարկայական ամբիոնները մասնագիտական խմբերը (այսուհետ մասնախմբեր):
30. Մասնախմբերը ղեկավարում են կրթահամալիրի առաջատար ուսուցիչները: Մասնախմբերի և ուսումնական կենտրոնների ղեկավարները ձևավորում են կրթահամալիրի մասնաժողովը: Մասնաժողովը սահմանված կարգով կրթահամալիրի խորհրդի հաստատմանն է ներկայացնում կրթահամալիրի կրթական հայեցակարգը: Կրթահամալիրի մասնաժողովի աշխատանքները ղեկավարում է կրթահամալիրի գործադիր տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալը: Մասնախմբերի ցանկը, մասնախմբերի ղեկավարներին ու մասնաժողովի կազմը, մասնախմբերի ու մասնաժողովի աշխատակարգը կրթահամալիրի գործադիր տնօրենի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի խորհուրդը:
31. Կրթահամալիրի աշակերտների բուժսպասարկումն իրականացնում են կրթահամալիրի բուժծառայությունը և առողջապահական մարմինների կողմից ամրակցված բուժանձնակազմը, որը կառավարման մարմինների հետ համատեղ պատասխանատու է բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման և սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման համար:
Կրթահամալիրը միջոցներ է ձեռնարկում տեղական ինքնակառավարման մարմնի կրթահամալիրին ամրագրած մասում ապրող պարտադիր ուսուցման ենթակա բոլոր երեխաներին ուսման մեջ ընդգրկելու համար:
32. Կրթահամալիրում ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Կրթահամալիրի հանրակրթական դպրոցներում սահմանվում է 5-օրյա կամ 6-օրյա ուսումնական շաբաթ ըստ պետական ուսումնական պլանի: Ուսումնական տարվա տևողությունը սահմանվում է առնվազն 34 շաբաթ, իսկ առաջին դասարանի համար 30 շաբաթ: Կրթահամալիրի դպրոցներում ուսումնադատիարակչական աշխատանքի կազմակերպման հիմնական ձևը դասն է: Դասի տևողությունը 45 րոպե է, բացառիկ դեպքերում այն կարող է փոփոխվել նախարարության կողմից:
33. Ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են կրթահամալիրի դպրոցների ուսումնական պլանների, ուսումնական ծրագրերի և դասացուցակների հիման վրա:
Կրթահամալիրի մասնաժողովի ներկայացմամբ մասնաճյուղերի ուսումնական պլանները, առարկայական ծրագրերը, ուսումնական տարում գործածվող ուսումնական ձեռնարկների և մեթոդական ուղեցույցների ցանկը հաստատում է կրթահամալիրի խորհուրդը:
34. Կրթահամալիրի դպրոցների ուսումնական պլաններում առանձին առարկաների հատկացվող ժամերի քանակը չպետք է պակաս լինի պետական հենքային ուսումնական պլանով նախատեսված ժամերի քանակից:

35. Առանձին սովորողների համար կրթական ծրագրերի յուրացման նորմատիվ ժամկետները կարող են փոփոխվել նախարարության սահմանած կարգով պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կրթահամալիրի գիտելիքների գնահատման կենտրոնում գիտելիքների ստուգմամբ:

IV. ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

36. Կրթահամալիրի կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նախարարությունը, կրթահամալիրի կառավարման կոլեգիալ մարմինը կրթահամալիրի խորհուրդը, (այսուհետ խորհուրդ), կրթահամալիրի գործադիր մարմինը գործադիր տնօրենն ու իր աշխատակազմը (այսուհետ գործադիր տնօրեն):
37. Կրթահամալիրի մասնաճյուղերում ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդներ:
38. Համայնքի, ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով կրթահամալիրի մասնաճյուղերում, որպես խորհրդակցական մարմիններ ձևավորվում են ծնողական խորհուրդներ, կարող են ձևավորվել նաև հոգաբարձուների և այլ խորհուրդներ:
39. Կրթահամալիրի հիմնադիրն ունի կրթահամալիրի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
40. Կրթահամալիրի հիմնադրի բացառիկ լիազորություններն են
    ա) կրթահամալիրի հիմնադրումը.
    բ) կրթահամալիրի գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.
    գ) կրթահամալիրին սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը.
    դ) կրթահամալիրի կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.
    ե) կրթահամալիրի կառավարման համակարգի սահմանումը.
    զ) կրթահամալիրի վերակազմակերպումը և լուծարումը.
    է) կրթահամալիրի լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.
    ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:
    Սույն կետի «գ», «դ», «ե» և «է» ենթակետերով նախատեսված լիազորությունները հիմնադրի կողմից վերապահված են նախարարությանը:
41. Նախարարությունն իրականացնում է կրթահամալիրի ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
    Նախարարությունը
    ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է կրթահամալիրի կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
    բ) վերահսկողություն է իրականացնում կրթահամալիրի գործունեության նկատմամբ.
    գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կրթահամալիրի գործադիր տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները, ցուցումներն ու որոշումները.
    դ) լսում է կրթահամալիրի գործունեության մասին հաշվետվությունները, քննում գործունեության արդյունքները.
    ե) վերահսկողություն է իրականացնում կրթահամալիրին ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.
    զ) օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

42. Կրթահամալիրի գործադիր տնօրենն իրականացնում է կրթահամալիրի ընթացիկ գործունեության ղեկավարումը և կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի կամ նախարարության հրամանների, որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

43. Գործադիր տնօրենը

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս կրթահամալիրի անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ.

բ) մասնակցում է կրթահամալիրի խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և նախարարության որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կրթահամալիրի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները.

դ) տալիս է կրթահամալիրի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

ե) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կրթահամալիրի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

զ) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

է) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների, աշխատակազմի և մասնաճյուղերի տնօրենների միջև, խորհրդի հաստատմանն է ներկայացնում իր աշխատակազմի կառուցվածքն ու աշխատակարգը.

ը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

թ) սահմանված կարգով իրականացնում է մանկավարժական կադրերի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

ժ) վերահսկողություն է իրականացնում դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, կրթահամալիրի աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

ժա) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

ժբ) աջակցում է կրթահամալիրի մասնաճյուղերի մանկավարժական, ծնողական և այլ խորհուրդների աշխատանքներին.

ժգ) կազմում է կրթահամալիրի հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք, կրթահամալիրի խորհրդի հաստատմամբ, ներկայացնում նախարարության հաստատմանը.

ժդ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և կրթահամալիրի կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ.

ժե) կազմակերպում է խորհրդի որոշումների կատարումը.

ժզ) ներկայացնում է կրթահամալիրը պետական մարմիններում, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա ուսումնական հաստատություններում, ձեռնարկություններում, հիմնարկներում, կազմակերպություններում: Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի մանկավարժական, գիտական և ստեղծագործական աշխատանքներից:

44. Գործադիր տնօրենի բացակայության դեպքում, սահմանված կարգով, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:

45. Կրթահամալիրի գործադիր տնօրենի ուսումնական-հետազոտական աշխատանքի գծով տեղակալը՝

ա) պատասխանատու է կրթահամալիրում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի իրականացման, դասավանդման որակի և սովորողների գիտելիքների մակարդակի համար.

բ) վերահսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնակարգում սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը, ղեկավարում կրթահամալիրի մասնաժողովի գործունեությունը.

գ) կրթահամալիրում կազմակերպում է մեթոդական աշխատանք, ներկայացնում մասնաճյուղերի ուսումնական պարապմունքների դասացուցակների միասնական պահանջները և ուսումնադաստիարակչական աշխատանքի վիճակի մասին կատարում ուսումնասիրություններ, խորհրդին ու գործադիր տնօրենին ներկայացնում հաշվետվություններ.

դ) ղեկավարում է կրթահամալիրի առարկայական մեթոդական միավորումների (կրթահամալիրի մասնախմբերի ամբիոնների) աշխատանքը, ընդհանրացնում և տարածում լավագույն ուսուցիչների աշխատանքի դրական փորձը, ուսուցիչներին հաղորդակից դարձնում գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին.

ե) ղեկավարում է կրթահամալիրում իրականացվող հետազոտական աշխատանքները.

զ) համակարգում է հատուկ ընդհանուր (այդ թվում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և արտակարգ ընդունակություններ դրսևորածների) ուսումնական գործունեությունը:

46. Կրթահամալիրի գործադիր տնօրենի դաստիարակչական աշխատանքի գծով տեղակալը

ա) համակարգում է սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքները, կրթահամալիրային միջոցառումները, ղեկավարում դաստիարակչական ծրագրերի մշակման աշխատանքները.

բ) ապահովում է կրթահամալիրի և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը.

գ) կազմակերպում է սովորողների հանգիստն ու ժամանցը, միջոցներ է ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար.

դ) մեթոդական-կազմակերպական օգնություն է ցուցաբերում մասնաճյուղերի դասղեկներին, խմբակների ղեկավարներին.

ե) աջակցում է մասնաճյուղերի սովորողների հանգիստն ու ժամանցը կազմակերպելուն, միջոցներ է ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար:

47. Կրթահամալիրի գործադիր տնօրենի վարչատնտեսական աշխատանքի գծով տեղակալը

ա) ղեկավարում է կրթահամալիրի շենքերի ու շինությունների սպասարկման ծառայությունը.

բ) պատասխանատու է կրթահամալիրի շենքերի և գույքի պահպանման, ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման, կրթահամալիրի մասնաճյուղերի շինությունների սանիտարահիգիենիկ ու բարեկարգ վիճակի, կրթահամալիրի ուսումնական պարապմունքներին դասասենյակների ժամանակին նախապատրաստման, հակահրդեհային պաշտպանության և սպասարկող անձնակազմի աշխատանքի կազմակերպման համար.

գ) միջոցներ է ձեռնարկում կրթահամալիրի ուսումնանյութական բազան հարստացնելու և ամրապնդելու համար.

դ) ղեկավարում է նշված ուղղություններով մասնաճյուղերի ղեկավարների գործունեությունը և աջակցում նրանց:

48. Կրթահամալիրի հանրակրթական դպրոցի դասարանի ղեկավարը (դասղեկը)

ա) դաստիարակչական աշխատանք է կատարում սովորողների շրջանում սերտորեն համագործակցելով մյուս ուսուցիչների հետ.

բ) ապահովում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի մանկավարժական պահանջների միասնականությունը.

գ) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.

դ) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկություններ.

ե) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ, հետևում տնային հանձնարարությունների կատարմանը, ուսման և հանգստի կազմակերպմանը.

զ) դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում վարքի կանոնները կոպտորեն խախտած սովորողի հարցը.

է) արգելում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:

49. Արտադրական ուսուցման վարպետը

ա) ապահովում է նախամասնագիտական (արհեստագործական) ուսուցման ծրագրերի և սովորողների կողմից աշխատանքի անվտանգության նորմերի և կանոնների կատարումը,

բ) անմիջականորեն պատասխանատու է արհեստագործական ուսուցման որակի համար,

գ) նախապատրաստում է արհեստանոցը (կաբինետը, մեքենասարքավորումները) արհեստագործական ուսուցման կազմակերպման համար,

դ) նախամասնագիտական պարապմունքների ժամանակ անցկացնում է սովորողների նախնական հրահանգավորումը, վերահսկում աշխատանքի անվտանգությունը,

ե) իրականացնում է սովորողների կողմից նախամասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիսամյակային և տարեկան ամփոփիչ գնահատումը,

զ) հետևում է սովորողների հաճախումներին, նրանց դաստիարակության հարցերում համագործակցում դասղեկի և մյուս ուսուցիչների հետ:

50. Դաստիարակը

ա) պարտավոր է պահպանել երեխաների կյանքը, ամրապնդել նրանց առողջությունը, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը.

բ) պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման և դաստիարակության համար.

գ) մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում է աշխատանք ծնողների շրջանում:

51. Նախարարությունը կրթահամալիրի կանոնադրության գրանցման պահից հետո 30 օրվա ընթացքում ձևավորում է կրթահամալիրի խորհրդի նոր կազմը (15 անդամ): Մինչև խորհրդի նոր կազմի ձևավորումը խորհրդի գործառույթներն իրականացնում է «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր պետական ձեռնարկության գործող խորհուրդը:

Խորհրդի անդամների թեկնածուներ առաջադրում են

- կրթահամալիրի մասնաճյուղերի մանկավարժական խորհուրդները, որոնք նիստում, փակ քվեարկությամբ, որոշում են կրթահամալիրի խորհրդի իրենց ներկայացուցիչներին (6 անդամ).
- կրթահամալիրի մասնաճյուղերի ծնողական խորհուրդները, որոնք նիստում, փակ քվեարկությամբ, որոշում են խորհրդի իրենց անդամներին (4 անդամ).
- միջին մասնագիտական հաստատության ուսանողական խորհուրդը ներկայացնում է իր թեկնածուներին (2 անդամ):

Նախարարությունը նշանակում է իր ներկայացուցիչներին (3 անդամ):

Կրթահամալիրի խորհրդի անդամ կարող են առաջադրվել միայն ֆիզիկական անձինք:

Կրթահամալիրի տնօրենը չի կարող առաջադրվել (ընտրվել) խորհրդի կազմում:

52. Խորհրդի լիազորությունների ժամկետը 3 տարի է:

53. Կրթահամալիրի խորհրդի առաջին նիստը գումարվում է նախարարության պահանջով խորհրդի անվանական կազմի հաստատումից հետո 7 օրվա ընթացքում: Խորհրդի առաջին նիստում, խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ, փակ քվեարկությամբ ընտրվում է խորհրդի նախագահ խորհրդի լիազորության ամբողջ ժամկետով: Խորհրդի նախագահի լիազորությունները կարող են դադարել իր դիմումի համաձայն:

54. Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են

ա) առաջադրողի նախաձեռնությամբ և խորհրդի որոշմամբ,

բ) իր դիմումի համաձայն:

Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման դեպքում նրան առաջադրող մարմինը 20-օրյա ժամկետում ներկայացնում է նոր անդամին:

55. Խորհուրդը

ա) նախարարության սահմանած մրցույթի անցկացման կարգի համաձայն ընտրում է կրթահամալիրի գործադիր տնօրեն, հաստատում նրա հետ կնքվող աշխատանքային պայմանագիրը, սահմանում տնօրենի վարձատրության կարգը.

բ) գործադիր տնօրենի ներկայացմամբ հաստատում է գործադիր տնօրենի տեղակալներին, մասնաճյուղի ղեկավարի հետ կնքվող աշխատանքային պայմանագիրը, սահմանում մասնաճյուղի ղեկավարի վարձատրության կարգը.

գ) որոշում է ընդունում կրթահամալիրի աուդիտն անցկացնելու մասին (կրթահամալիրի բյուջեի հաշվին) և հաստատում աուդիտն իրականացնողի վարձատրության չափը.

դ) հաստատում է կրթահամալիրի աշխատանքային ու ներքին կարգապահական կանոնները, կրթահամալիրի ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաստիքային ցուցակը, ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունները և առաջարկություն ներկայացնում նախարարությանը.

ե) քննարկում է հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը, հիմնադրի կողմից սահմանված կարգով որոշում է կրթահամալիրի շահույթի տնօրինման հիմնական

ուղղությունները և կարգը, առաջարկություններ ներկայացնում հիմնադրին կրթահամալիրի կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու.

զ) հաստատում է իր աշխատակարգը, ընտրում խորհրդի նախագահ.

է) կրթահամալիրի գործունեության առարկային, նպատակներին և խնդիրներին համապատասխան առաջարկություններ է ներկայացնում նախարարությանը, մասնաժողովի ներկայացմամբ հաստատում կրթահամալիրում իրագործվող ծրագրերը, հետազոտական և մեթոդական աշխատանքների թեմաները, մասնաճյուղերի ուսումնական պլանները.

ը) հաստատում է կրթահամալիրի մասնաճյուղերի ամենամյա ծախսերի նախահաշիվը, սահմանված կարգով գործադիր տնօրենի միջոցով նախարարության հաստատմանն է ներկայացնում կրթահամալիրի հաստիքացուցակը, քննարկում ամենամյա ֆինանսական և կրթական հետազոտական գործունեության հաշվետվությունները.

թ) իրականացնում է օրենքով, հիմնադրի կողմից իրեն վերապահված և (կամ) սույն կանոնադրությամբ ու մասնաճյուղերի կանոնադրություններով նախատեսված լիազորություններ:

56. Նախարարության (նրա ղեկավարության) կամ կրթահամալիրի ենթակայության փոփոխումը չի կարող հիմք հանդիսանալ խորհրդի լիազորությունների դադարեցման համար:

57. Խորհրդի նախագահը

ա) կազմակերպում է խորհրդի աշխատանքները.

բ) նախագահում է խորհրդի նիստերը.

գ) կազմակերպում է խորհրդի արձանագրությունների վարումը և վավերացնում դրանք:

58. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում, խորհրդի որոշմամբ, նրա պարտականությունները կատարում է խորհրդի անդամներից մեկը:

59. Խորհրդի նիստերը գումարվում են նրա նախագահի կողմից առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, ինչպես նաև նախարարության, գործադիր տնօրենի, խորհրդի անդամների 1/3-ի պահանջով: Խորհրդի անդամների 1/3-ի պահանջով նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետում և օրակարգով:

60. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին:

61. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ խորհրդի անդամն ունի միայն մեկ ձայնի իրավունք: Չի թույլատրվում ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի: Խորհրդի նիստերն արձանագրվում են:

Խորհրդի անդամի լիազորությունները կասեցվում են տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու դեպքում:

62. Նախարարությունը, կրթահամալիրի, մասնաճյուղերի տնօրենները, նրանց տեղակալները, խորհրդի անդամները կրթահամալիրի անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն ի շահ իրենց կողմից ներկայացվող կրթահամալիրի (մասնաճյուղի):

63..Կրթահամալիրի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, նախարարությունը, հիմնադրի կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

V. ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

64. Կրթահամալիրի սեփականությունը ձևավորվում է կրթահամալիրի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կրթահամալիրի գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

65. Կրթահամալիրն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

66. Հիմնադիրը սեփականության իրավունքով կրթահամալիրին պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

67. Կրթահամալիրի սեփականության պահպանման հոգսը կրում է կրթահամալիրը:

68. Կրթահամալիրի սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում միայն դատական կարգով:
69. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից կրթահամալիրին ամրացված գույքը:
70. Կրթահամալիրն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:
Կրթահամալիրն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության, օրենքով սահմանված կարգով:
Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավելի բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:
Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կրթահամալիրի ստացած եկամուտները կրթահամալիրի սեփականությունն են:
Կրթահամալիրին ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:
71. Կրթահամալիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է ֆինանսական միջոցները:
72. Կրթահամալիրը ֆինանսավորում է հիմնադիրը: Կրթահամալիրի ֆինանսական միջոցները գոյանում են բյուջետային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:
73. Կրթահամալիրի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են
ա) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վճարովի կրթական ծառայությունների մատուցումից ստացված միջոցները.
բ) բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.
գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և կրթահամալիրի կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:
74. Կրթահամալիրի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) նախարության կողմից ընտրված աուդիտորի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական գործառույթ իրականացնող մարմնի կողմից:

VI. ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ, ՍՈՎՈՐՈՂԸ ԵՎ ԾՆՈՂԸ

75. Կրթահամալիրում մանկավարժական աշխատանքի կարող է ընդունվել մանկավարժի որակավորում ունեցող մասնագետը, բացառիկ դեպքերում ոչ մանկավարժական կրթություն ունեցող անձը, որի կրթահամալիրում աշխատելու կարգը և պայմանները սահմանում է նախարարությունը:
76. Կրթահամալիրի մանկավարժն իրավունք ունի մասնակցելու կրթահամալիրի կառավարմանը մասնակցելով կրթահամալիրի խորհրդի, մասնաճյուղերի մանկավարժական խորհուրդների և կրթահամալիրի առարկայական ամբիոնների աշխատանքներին:
Կրթահամալիրի մանկավարժական և մյուս աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:
77. Կրթահամալիրի մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական պետական չափորոշիչներով որոշվող ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից:
78. Սովորողն իրավունք ունի
ա) անվճար ստանալու տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն.
բ) անկախ բնակության վայրից սահմանված կարգով ընտրելու այլ ուսումնական հաստատություն և ուսուցման ձև.
գ) սահմանված կարգով օգտվելու կրթահամալիրի բոլոր ծառայություններից, այդ թվում առանձին ծառայություններից անվճար.
դ) կրթահամալիրում յուրացնելու լրացուցիչ վճարովի կրթական ծրագրեր.
ե) ազատ արտահայտելու սեփական հայացքներն ու համոզմունքները.

զ) առանց հիմնական կրթություն ստանալու 16 տարին լրանալուց հետո, ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնությամբ, թողնելու ուսումը:

79. Կրթահամալիրում արգելվում է առանց ծնողների և սովորողների համաձայնության սովորողներին ընդգրկել այնպիսի աշխատանքներում, որոնք նախատեսված չեն հանրակրթական ծրագրերով և սույն կանոնադրությամբ:
80. Արգելվում է սովորողների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:
81. Սովորողը պարտավոր է բարեխղճորեն սովորել, խնամքով վերաբերվել կրթահամալիրի գույքին, հարգել կրթահամալիրի սովորողների և աշխատողների իրավունքներն ու արժանապատվությունը, պահպանել կրթահամալիրի կարգապահական կանոնները:
82. Կրթահամալիրի (մասնաճյուղի) ներքին կարգապահական կանոնները կոպտորեն խախտելու համար սովորողը նախարարության սահմանած կարգով կարող է հեռացվել կրթահամալիրից (մասնաճյուղից):
83. Ծնողն իրավունք ունի պաշտպանելու երեխայի օրինական շահերն ու իրավունքները, մասնակցելու կրթահամալիրի կառավարմանը, լրացուցիչ ուսումնական պարապմունքներին, միջոցառումներին, կրթահամալիրի խորհրդի, մանկավարժական խորհուրդների աշխատանքներին, կրթահամալիրի (մասնաճյուղի) բոլոր ծառայություններից ստանալու անհրաժեշտ տեղեկություններ:
84. Ծնողը պարտավոր է երեխայի դասղեկի, մասնաճյուղի (կրթահամալիրի) տնօրենի կանչով ներկայանալ կրթահամալիր (մասնաճյուղ), մասնակցել երեխայի վարքին ու առաջադիմությանը վերաբերող քննարկումներին, դասարանի ծնողական հավաքներին:

VII. ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

85. Կրթահամալիրը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ЮСТИЦИИ РА, ГОСУДАРСТВЕННАЯ РЕГИСТРАЦИОННАЯ СЛУЖБА
RA MIN. OF JUSTICE, STATE REGISTER SERVICE

ՁԵՎ 1

ՀԱՅՏԱՁԵՎ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի պատվերով

իրականացվող մշակութային միջոցառումների անցկացման մրցույթի

Ընդհանուր տեղեկություններ

Ծրագրային անվանակարգ	***Առաջարկվող նախագծի/ միջոցառման անվանումը*** *«Հոգևոր երգերի փառատոն» Հառիճի վանական համալիրի տարածքում*
Ծրագրի ընդհանուր բյուջե *500.400 ՀՀԴ*	***ՀՀ Շիրակի մարզպետարանից հայցվող գումար*** *500.400 ՀՀԴ*
Ծրագրի սկիզբ/ավարտ	*Մայիսի 30, ժամը 16:00*
Կազմակերպության պաշտոնական անվանում	*ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ*
Կազմակերպության իրավական կարգավիճակ	*Պետական ոչ առևտրային կազմակերպություն*
Կազմակերպության ՀՎՀՀ	*01804186*
Կազմակերպության իրավաբանական հասցե	*ք. Երևան, Ռաֆֆի 57*
Կազմակերպության գործունեության հասցե	*ք. Երևան, Ռաֆֆի 57*
Կազմակերպության բանկային տվյալները	*(բանկի անվանում) ՀՀ ՖՆ գործառնական վարչություն (հաշվեհամար)* *Հ/Հ - 900018003203*
Կազմակերպության ղեկավարի անուն, ազգանուն	*Աշոտ Բլեյան*

Նախագծի/ծրագրի/միջոցառման ղեկավարի անուն, ազգանուն	*Անի Նավասարդյան*
Նախագծի /ծրագրի/ միջոցառման ղեկավարի հեռախոսահամար/ էլ. փոստ	*093-721-627* *aninavasardian@gmail.com*

Կազմակերպության առաքելության և գործունեության նկարագրությունը. կազմակերպության հաջողության պատմությունները, խնդիրները, գործունեության փորձառությունը (առավելագույնը 300 բառ): Կից ներկայացնել թիմի անդամների հակիրճ ինքնակենսագրականները, կազմակերպության գործունեության գնահատման ցանկացած փաստաթուղթ (դիպլոմ, պատվոգիր, մրցանակ, հավաստագիր և այլն):

Կրթահամալիրի առաքելությունն ու գործունեության առարկան որոշված են իր կանոնադրությամբ: https://www.mskh.am/am/70291

Կրթահամալիրի գործունեության առարկան նախադպրոցական, ընդհանուր տարրական, հիմնական, միջնակարգ, հատուկ (այդ թվում՝ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների) նախամասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, արտադպրոցական (նախասիրական, լրացուցիչ) կրթական ծրագրերի իրականացումն է: Կրթահամալիրի գործունեության նպատակներն են՝

ՀՀ կառավարության 10.05.1990թ. N216 որոշմամբ հաստատված՝ ազգային դպրոցի հարուստ ավանդույթների վերածնունդը, առաջավոր կրթական, այդ թվում՝ կրթահամալիրի հետազոտող մանկավարժների մշակած մոտեցումների ներդրում.

երեխաների (այդ թվում՝ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների) ներդաշնակ ու բնական զարգացման համար մանկավարժահոգեբանական, սոցիալական անհրաժեշտ պայմանների ապահովում:

Կազմակերպության գործունեությանը կարող եք հետևել բազմալեզու կայքի միջոցով՝ https://mskh.am/

Միջոցառման անցկացման համար առաջարկվող հայեցակարգ և նկարագրությունը (առավելագույնը 300 բառ)

Ուսուցիչներն ընտրում են յուրաքանչյուրը մոտ 10 աշակերտի ու սովորեցնում 3 հայ հոգևոր երգ:

Մայիսի 30-ին բոլոր մասնակիցները մեկնում են Հառիճ ու երգում այդ 3 հոգևոր երգերը:

Երգելուց հետո իրականացնում են նաև երգուսուցում Հառիճ ժամանած այլ մարդկանց հետ:

Երգուսուցումից հետո տեղի է ունենում համերգ ժամանած երգչախմբերի մասնակցությամբ:

Միջոցառման անցկացման համար առաջարկվող հիմնավորումը, նորարարությունը և/կամ կարևորությունը, արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ գործիքակազմը եւ տեխնիկաները (առավելագույնը 300 բառ):

1.Ուսուցիչների վերապատրաստում

2.Հոգևոր երգերի տարածում

3. Միասնական կատարում

4.Երգուսուցում փառատոնի ժամանակ

Անհրաժեշտ գործիքակազմ

1.Ուսուցիչներ

2.Աշակերտներ

3. Երգչախմբեր

4. Մեդիա դաշտ՝ ընթացքն ու բուն միջոցառումը տարածելու համար

5. Ձայնային տեխնիկա՝

Միջոցառման անցկացման համար առաջարկվող ձևերը (առավելագույնը 300 բառ):

1.Ուսուցիչներն ընտրում են առնվազն 10 աշակերտի ու սովորեցնում ծրագրի կողմից առաջարկվող 3 պարտադիր հոգևոր երգ:

2.Միջոցառման օրը բոլորը հանդիպում են Հառիճում, երգում պարտադիր երգերը, անցկացնում երգուսուցում ժամանած հյուրերի հետ:

3.Տեղի է ունենում համերգ ժամանած երգչախմբերի մասնակցությամբ:

Միջոցառման անցկացման համար առաջարկվող թիրախային խմբերը և մասնակիցները:

1.Դպրոցներ

2.Ուսուցիչներ

3.Աշակերտներ

4. Երգչախմբեր

Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքները:

1.Ուսուցիչների վերապատրաստում

2.Հոգևոր երգերի ուսանում

3.Միասնական կատարումների ժամանակ փորձի փոխանակում, ծանոթություն, ընկերություն

4.Երգուսուցում

Միջոցառման շարունակականությունը, հեռանկարայնությունը և ազդեցության երկարատևությունը:

Միջոցառումը կարող է ծառայել որպես ուսուցիչների վերապատրաստում, ազգային մշակույթի տարածում, ճանաչում, միմյանց հետ հանդիպումների, շփումների, փորձի փոխանակման ապահովում, ճաշակի զարգացում:

Ուսուցիչներն այդ երգերը կարող են սովորեցնել իրար փոխարինող աշակերտական սերունդներին, որոնք էլ իրենք հերթին կհանդիսանան մշակույթի կրողներ ու տարածողներ:

Դիմողի կողմից վերջին երեք տարիների ընթացքում իրականացված ծրագրերի համառոտ նկարագրությունը (առավելագույնը 300 բառ)

Կրթահամալիրն արեն երկար տարիներ իրականացնում է նման վերապատրաստումներ, երգուսուցումներ, մշակութային միջմարզային հանդիպումներ:

Արդեն 6 տարի է գործում է ՄՍԿՀ «Սեբաստացիներ ուսուցչական քառաձայն երգչախումբը, որի չափազանց առատ գործունեությանը կարող եք ծանոթանալ խմբի բլոգի հղումով: https://ergchaxumbmskh.wordpress.com/

Ծրագրի իրականացման պատասխանատու, <<Գյումրու ուսուցչական երգչախմբի>> նախաձեռնող, խմբավար, <<Խազեր>> երգչախմբերի հիմնադիր, խմբավար Անի Նավասարդյանի կենսագրությանն ու գործունեությանը կարող եք ծանոթանալ այս հղումով https://docs.google.com/document/d/1o9EJVJ0234macwipd_EY1pWUSP52C63M18Y8NnKrpb4/edit

ՀՀ պետական և այլ կառույցներից նախկինում ստացած դրամաշնորհային աջակցություն/ներ. նշել ծրագրի անվանումը, տարեթիվը, ֆինանսավորման չափը:

Կրթահամալիրը ՀՀ ԿԳՆ հետ ամենամյա պայմանագրով ստանում է պետական աջակցություն հեղինակային կրթական ծրագրերի, այդ թվում՝ հանրակրթական (նախադպրոցական, տարրական կրթության, հիմնական կրթության, միջնակարգ կրթության), լրացուցիչ ուսուցման ծրագրերի, անհատի օժտվածության զարգացման ծրագրերի մշակման և կազմակերպման, նախադպրոցականի զարգացման ծրագրի մշակման, ծրագրի խմբերի պահպանման համար:

Միջոցառման անցկացման համար առաջարկվող նկարագրությունը և ժամանակացույցը (ըստ ներկայացված աղյուսակի)

N	***Նախատեսվող աշխատանքներ***	***Սկիզբ***	***Ավարտ***
1.	Երգերի ուսուցում		30.05.2019
2.	Բուն փառատոն	*30.05* *Ժամը 16:00*	*30.05* *Ժամը 18:00*
3.	Լուսաբանում	*30.05* *Ժամը 16:00*	

ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ ***Ա. Բլեյան***

Կ.Տ.

Հավելված 1

«ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԵՐԻ ՓԱՌԱՏՈՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Միջոցառումը կանցկացվի Հառիճի վանական համալիրի տարածքում՝ ս/թ մայիսի 30-ին

Միջոցառումը բաղկացած կլինի 2 մասից: Առաջին հատվածում մասնակիցները Հառիճավանքի բակում կերգեն 3 պարտադիր հոգևոր երգերը, որոնք նախապես սովորել են միասնական երգչախմբում երգելու համար:

1. Հայր մեր – Կոմիտաս (մանկական տարբերակ),
2. Սուրբ Աստուած- Կոմիտասի պատարագից,
3. Քրիստոս ի մեջ- Կոմիտասի պատարագից:

Այնուհետև հյուրերին կբաժանվեն երգերի բառերն ու կանցկացվի երգուսուցում: Երգուսուցման ընթացքում, յուրաքանչյուր երգից առաջ 2 հաղորդավար՝ «Իրական դպրոցի» պատանիներից՝ 1 աղջիկ ու 1 տղա, երգերի մասին տեղեկություններ կհաղորդեն: Այս ամենը կտևի մոտ 30 րոպե: Բացի պատանի վարողներից, միջոցառումը կվարի արհեստավարժ հաղորդավարը, ով ընթացքում Կոմիտասի, հայ հոգևոր երաժշտության, խազերի մասին տեղեկություններ է կհաղորդի ներկաներին: Միջոցառման երկրորդ հատվածում հաղորդավարը հանդիսատեսին կհրավիրի ունկնդիր լինելու միջոցառման համերգային մասին, որտեղ մասնակից երգչախմբերի կողմից կկատարվեն Հայ հոգևոր եգեր:

Միջոցառման մասնակիցների համար կապահովվի տրանսպորտ: Միջոցառման համերգային մասին կմասնակցեն հետևյալ երգչախմբերն իրենց ծրագրերով՝

Հառիճավանքի Թրբանճյան ընծայարանի երգչախումբ

1. Հայր մեր - Կոմիտաս

«Ռադիո Մարիամ»-ի երգչախումբ

2. Ով զարմանալի - Կոմիտաս

3. Մեծացուսցե - Կոմիտաս

«Խազեր» անսամբլ

4. Բարեխոսությամբ -Կոմիտասի պատարագից

5. Քրիստոս պատարագյալ -Կոմիտասի պատարագից

Պեմզաշենի արվեստի դպրոցից մենակատար երեխա

6.Տերողորմեա - -Կոմիտաս

«Ընտանիք» կենտրոնի երգչախումբ

7. Այսօր ցնծան -Գ. Նարեկացի, մշ. Մ. Եկմալյանի

Ամասիայի մանկական արվեստի դպրոցի երգչախումբ

8. Անձինք նվիրեալք - Կոմիտաս

Գյումրու թիվ 5երաժշտական դպրոցի երգչախումբ

9.Մարմին Տէրունական – Կոմիտաս

Սեբաստացիներ ուսուցչական երգչախումբ

10. Սիրո քո հուր -Կոմիտաս

11.Տերողորմեա –Կոմիտաս

Սբ. Աստվածածին եկեղեցվո երգչախումբ

12. Տաղ Սբ. Աստվածածնա - Մ. Եկմալյան

13. Տեր ողորմեա - Զարեհ Արք. Ազնավուրյան

ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ ***Ա. Բլեյան***

Կ.Տ.

Հավելված 2

Միջոցառման առանձնահատկությունն այն է որ մասնակիցների մեջ են ոչ միայն մասնագիտացված երգչախմբեր ու երաժիշտներ, այլև սիրողական խմբեր, որոնք որոշել են հաղթահարել հոգևոր երգերի կատարման բարդություններն ու մասնակցել միջոցառմանը:

Միջոցառման բոլոր մասնակիցները «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր»-ի կողմից կպարգևատրվեն պատվոգրերով և հուշանվերներով, որն էլ կլինի կազմակերպիչ կողմի ներդրումը:

Միջոցառման մասնակից խմբերն են՝

1. *Հառիճավանքի Թրբանճյան ընծայարանի երգչախումբ (մանկական) - Խմբավար՝ Հասմիկ Հարությունյան,*
2. *Գյումրու թիվ 20 հիմնական դպրոցի երգչախումբ (մանկական) - Խմբավար՝ Լարիսա Ժամակոչյան,*
3. *Պեմզաշենի արվեստի դպրոցի երգչախումբ (մանկական) - Խմբավար՝ Սուսաննա Եղոյան,*
4. *ԿԳՆ «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնի երգչախումբ (մանկական) - Խմբավար՝ Արեւիկ Թանաշեան,*
5. *Գյումրու Շերամի անվան թիվ 5 երաժշտական դպրոցի երգչախումբ (մանկական) - Խմբավար՝ Անժելա Բաղդասարյան,*
6. *Գյումրու Ն. Տիգրանյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցի երգչախումբ (մանկական) - Խմբավար՝ Նելլի Պապոյան,*
7. *Ամասիայի մանկական արվեստի դպրոցի երգչախումբ (մանկական) - Խմբավար՝ Նարինե Ալեքսանյան,*
8. *Վահրամաբերդի երաժշտական դպրոցի երգչախումբ (մանկական) - Խմբավար՝ Անահիտ Կարապետյան*

9. *Իրական դպրոց կրթամշակութային հիմնադրամ, Գյումրու մասնաճյուղի երգչախումբ (պատանիներ) - Խմբավար՝ Վարդուհի Բալոյան*
10. *Գյումրու ուսուցչական նորաստեղծ երգչախումբ (կանացի) - Խմբավար՝ Անի Նավասարդյան*
11. *Երևանի ՄՍԿՀ <<Սեբաստացիներ>> ուսուցչական երգչախումբ (կանացի) - Խմբավար՝ Հարություն Թոփիկյան*
12. *«Ռադիո Մարիամ» մշակութային հիմնադրամի երգչախումբ (կանացի) - Խմբավար՝ Արփինե Մանուկյան*
13. *«Խազեր անսամբլ» (երկսեռ) - Խմբավար՝ Անի Նավասարդյան*
14. *Սբ. Աստվածածին եկեղեցվո երգչախումբ (երկսեռ) - Խմբավար՝ Սաթիկ Վարդանյան*

ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ ***Ա. Բլեյան***

Կ.Տ.

N	Բյուջեի հոդվածը	Միավոր	Միավորի քանակը	Մեկ միավորի արժեքը ՀՀԴ	ՀՀ Շիրակի մարզպետարանից ակնկալվող	Հայցող կազմակերպության ներդրումը ՀՀԴ	Այլ աղբյուրներից ներդրում ՀՀԴ	Ընդամենը ՀՀԴ
1	**Մարդկային ռեսուրսներ (ներառյալ աշխատավարձ և հոնորար)**							
	Ծրագրի ղեկավար	*մարդ*	*1*	70,000	70,000			**70,000**
	Հաղորդավար	*մարդ*	*1*	60,000	60,000			**60,000**
	Ընդամենը							
2	**Նյութածախս**							
	Ձայնային տեխնիկական միջոցների վարձակալում	*անգամ*	*1*	140,400	140,400			**140,400**
	Ընդամենը							
3	**Տրանսպորտային ծախսեր**							
	Մասնակիցների ուղևորափոխադրում	*անգամ*	*1*	230,000	230,000			**230,000**
	Ընդամենը							
4	**Կեցության և սննդի ձեռք բերման ծախսեր**							
	Ընդամենը							
5	**Տպագրական ծախսեր**							
	Երգերի բառերի տպագրություն	*հատ*	*100*	15		1,500		**1,500**
	Պատվոգրերի տպագրություն	*հատ*	*14*	500		7,000		**7,000**
	Ընդամենը							
6	**Հանրահռչակմանն ուղղված ծախսեր**							
	Ընդամենը							
7	**Այլ (մանրամասն նշել)**							
	Մասնակիցների համար հուշանվերների ձեռք բերում	*հատ*	*14*	5,000		70,000		**70,000**
	Ընդամենը							
	Ընդամենը							**578,900**

Ծրագրի ղեկավար **Ա. Նավասարդյան**

Հաշվապահ **.. Աբրահամյան**

Ամսաթիվ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

0051 ՀՀ ք.Երևան Կոմիտաս 35, հեռ 011544116

"08"_05_2019թ. N 2821

ՏԵՂԵԿԱՆՔ

Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ

Տրվում է առ այն, որ 07.05.2019 թվականի դրությամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ՊՈՒԱԿ

ՀԿՀՀ 01804186

հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով պարտավորությունները, դեբետային գումարները, սահմանված չափից ավել վճարված գումարները և միասնական հաշվում առկա գումարները, տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա, կազմում են՝

Հարկի կամ վճարի անվանումը	Հարկի կամ վճարի չափը	Տույժը	Տուգանքը	Պարտավորության չափը (ընդամենը)
1	2	3	4	5
Ավելացված արժեքի հարկ				-
Ներմուծման մասով ավելացված արժեքի հարկ				-
Շահութահարկ				-
Եկամտային հարկ				-
Ակցիզային հարկ				-
Ներմուծման մասով ակցիզային հարկ				-
Շրջանառության հարկ				-
Արտոնագրային հարկ				-
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար				-
Ներմուծման մասով բնապահպանական հարկ				-
Ոչ ռեզիդենտի շահութահարկ				-
Սոցիալական վճար (տնական)				-
Սոցիալական վճար (տարեկան)				-
Պետական տուրք				-
Ռոյալթի				-
Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար				-
Ճանապարհային հարկ				-
Հաստատագրված վճար				-
Պարզեցված հարկ				-
Եկամտահարկ				-
Պարտադիր սոցիալական ապահովության վճար				-
Տուգանքներ և մնասի հատուցման գումար				-
Դրոշմանիշային վճար	5,000			5,000
Ընդամենը	5,000	-	-	5,000

Դեբետային մնացորդ		Սահմանված չափից ավել վճարված գումարներ				Միասնական հաշվում առկա գումար
Ավելացված արժեքի հարկ	Ակցիզային հարկ	Մինչև 01.01.2018թ	01.01.2018թ.-ից հետո սոցիալական վճարի գծով (հաշվարկի ճշգրտման արդյունքում առաջացած)	Դրոշմանիշային վճարի գծով	Պետական տուրքի գծով	
6	7	8	9	10	11	12
						2,745,805

Տեղեկանքը տրվում է ներկայացնելու՝

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 20 բաժնի պետ՝

Գ.ԱՐԱԲԱՋՅԱՆ

Տեղեկանքը կազմող աշխատակից՝ _____ Ե.Աբրահամյան
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

08_05_2019թ

Սույն տեղեկանքը տրվում է տեղեկանքի տրամադրման օրվա դրությամբ հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա, որը կարող է փոփոխվել հսկողական միջոցառումների արդյունքում կամ հարկ վճարողի գործունեության վերաբերյալ նոր տվյալներ առաջ գալու պարագայում:

Հավելված N 1
ՀՀ ֆինանսների նախարարի
2010 թվականի մայիսի 18-ի
N 346-Ն հրամանի

«Կատարող»

ՀՀ ԿԳՆ «Երևանի
«Մխիթար Սեբաստացի»
կրթահամալիր» ՊՈԱԿ
Ք. Երևան, Բաֆֆի 57
ՀՎՀՀ 01804186
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900018003203

«Պատվիրատու»

ՀՀ Շիրակի մարզպետարան
ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

ՀՎՀՀ 05507437

Գյումրու ՏԳԲ

Հ/Հ 900211287033

Ա Կ Տ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ
«06» հունիսի 2019 թ.

Պայմանագրի անվանումը՝ «Հոգևոր երգերի մարզային փառատոն» մշակութային միջոցառման շրջանակներում «Այլ ընթացիկ դրամաշնորհների տրամադրման պայմանագիր»
Պայմանագրի կնքման ամսաթիվը «29» «մայիսի» 2019 թ.
ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կատարող) ի դեմս տնօրեն Ա.Բլեյանի մի կողմից, և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանը, ի դեմս մարզպետ Տ.Պետրոսյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մյուս կողմից, կնքեցին սույն ակտը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Կատարողը 2019 թ. մայիսի 30-ին իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Համառոտ նկարագիրը	Քանակը	Նվազագույն շահավետ գինը՝ մեկ միավորի հաշվարկով (դրամ)	Մեկ միավորի գինը (դրամ)	Մեկ միավորի համար տրամադրվող գումարի չափը (դրամ)	Վճարման ենթակա գումարը (դրամ)	Վճարման վերջնաժամկետը՝ ամիս, ամսաթիվը
1	*2*	*3*	*4*	*5 ≤ 3-4*	*6=2x5*	*7*
«Հոգևոր երգերի մարզային փառատոն» մշակութային միջոցառման անցկացում	1	500 400	0	500 400	500 400	2019 թ. հունիսի 27-ը
Ընդամենը				500 400	500 400	

Աշխատանքը հանձնեց

Ա.Բլեյան

Աշխատանքը ընդունեց

Տ. Պետրոսյան

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ պետական բյուջեի մասին 2019 թ ՀՀ օրենքով նախատեսված
«Հոգևոր երգերի մարզային փառատոն»
մշակութային միջոցառման անցկացման վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Հոգևոր երգերի մարզային փառատոն» մշակութային միջոցառումն իրականացվել է ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից՝ համաձայն պայմանագրի և նրա հավելվածների:

Միջոցառումն անցկացվել է բարձր մակարդակով և ծառայել է իր նպատակին, ինչի համար տալիս ենք դրական եզրակացություն:

ՀՀ Շիրակի մարզպետի խորհրդական՝ Տ. Մինասյան

ՀՀ Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ՝ Վ. Վարդանյան

ՀՀ Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա. Հարությունյան

ՀՀ Շիրակի մարզպետի օգնական՝ Է. Բաղդասարյան

ՀՀ Շիրակի մարզպետի օգնական՝ Ա.Մաղաքյան

ՀՀ ԿԳՆ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ
0064, Երևան, Ռաֆֆու 57
Raffy 57, Yerevan
Ереван, ул. Раффи 57
(374 10) 74 72 46 (374 91) 43 10 99
«MKHITAR SEBASTATSI» EDUCATIONAL COMPLEX MINISTRY OF EDUCATION AND SCIENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КОМПЛЕКС «МХИТАР СЕБАСТАЦИ» Министерства образования и науки РА
https://www.facebook.com/mxitaar.sebastaci?fref=ts info@mskh.am www.mskh.am

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պետրոսյան

Խնդրում ենք ընդունել 2019 թվականի ՀՀ Պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով նախատեսված ստորև ներկայացվող «Հոգևոր երգերի մարզային փառատոն» մշակութային միջոցառման համար փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը.

h/h	Ծախսի անվանումը	Քանակը	Չափման միավորը	Միավոր արժեքը /ՀՀ դրամ/	Ընդամենը արժեքը /ՀՀ դրամ/
1.	Ձայնային տեխնիկական միջոցների վարձակալում	1	անգամ	140 400	140 400
2.	Մասնակիցների ուղևորափոխադրում՝ • Գյումրի-Հառիճ-Գյումրի	9	անգամ	15 000	230 000
	• Վահրամաբերդ-Հառիճ-Վահրամաբերդ	1	անգամ	20 000	
	• Ամասիա-Հառիճ-Ամասիա	1	անգամ	30 000	
	• Պեմզաշեն-Հառիճ-Պեմզաշեն	1	անգամ	15 000	
	• Երևան-Հառիճ-Երևան	1	անգամ	30 000	
3.	Ծրագրի ղեկավար	1	մարդ	70 000	70 000
4.	Հաղորդավար	1	մարդ	60 000	60 000
Ընդամենը (առանց ավելացված արժեքի հարկի)՝					500 400

Ընդամենը ծախսերը կազմել են 500 400/հինգ հարյուր հազար չորս հարյուր/ՀՀ դրամ

Կից ներկայացվում է նախահաշվով նախատեսված և կատարված ծախսերի հետ կապված ֆինանսական փաստաթղթերը:

Առդիր՝ էջ:

Հարգանքով՝

ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ **Ա. Բլեյան**